*St. John The Baptist Armenian Church of Miami, Fl.*

ՍԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄԱՅԱՄԻ

**Tel: Voice (305) 871-7714**

**or**

**FAX (305) 871-7714 *51**

# FACSIMILE TRANSMISSON

**TO:** Diocese of the Armenian Church

**ATTENTION:** Archbishop Khajag Barsamian

**FAX NUMBER:** (212) 447-6674

**FROM:** ***Fr. Oshagan Gulgulian***

**DATE:**________________

**NUMBER OF PAGES (Including Cover Sheet)** 6

**MESSAGE/COMMENTS:**

[illegible]

# ԿԱՐԳ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՏԵՂԻՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

*Ժողովեալ Եպիսկոպոսին զուխտ Եկեղեցւոյ, եւ ինքն զգեցեալ շուրջառ եւ ունելով ի ձեռս խաչ եւ Գաւազան, եւ ամենայն ուխտն կալով յաջմէ եւ յահեկէ, ասասցէ:*

**Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն:**

**Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի. զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ ի չարէ:**

**Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

**Եւ ասասցեն.**

**Սաղմոս ՁԹ. Կցուրդ**

**Ալէլուիա. ալէլուիա:**

**Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ:**

**Տէր ապաւէն եղեր մեր ազգէ մինչեւ յազգ, մինչեւ լերինք հաստատեալ էին եւ մինչեւ ստեղծեալ զերկիր եւ զամենայն տիեզերս:**

**Յաւիտենից մինչեւ յաւիտեանս դու ես, մի՛ դարձուցաներ զմարդ ի տառապանս. եւ ասացեր, դարձարուք առ իս որդիք մարդկան:**

**Հազար ամ յաչս Տեառն որպէս օր երեկի զի անց. որպէս պահ մի գիշերոյ, եւ ամք նոցա անարգութեամբ եղիցին:**

**Ընդ առաւօտս որպէս դալարի բուսցին, ընդ առաւօտս որպէս դալարի զուարճասցին եւ ծաղկեսցին. ընդ երեկոյս թարշամեսցին չորասցին եւ անկցին:**

**Նուաղեցաք մեք ի բարկութենէ քումմէ. եւ ի սրտմտութենէ քումմէ խռովեցաք:**

**Եդիր զմեղս մեր առաջի քո. եւ զկեանս մեր ի լոյս երեսաց քոց:**

**Ամենայն աւուրք մեր նուաղեցան. եւ ի բարկութենէ քումմէ խռովեցաք:**

**Ժամանակ ամաց մերոց անդադար որպէս սարդի. եւ թիւ աւուրց մերոց ի նոսա եօթանասուն ամ:**

**Ապա թէ առաւել եւս՝ ութսուն ամ, որ ինչ աւելի քան զայն՝ ցաւօք եւ հեծութեամբ:**

**Եկն ի վերայ մեր հեծութիւն եւ խրատեցաք. իսկ արդ ո՞ գիտացէ զզօրութիւն բարկութեան քո կամ յահէ քումմէ զսրտմտութիւն քո համարեսցի:**

**Այսպէս ցոյց ինձ զաջ քո. եւ որ խոնարհ են սրտիւք զիմաստութիւն քո:**

**Դարձ Տէր, մինչեւ յե՞րբ. մխիթարեա ի ծառայս քո:**

**Լցաք առաւօտու ողորմութեամբ քով. ցնծացաք եւ ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց:**

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն յորս խոնարհ արարին զմեզ. եւ ամացն յորս տեսաք զչարչարանս:

Հայեա՛, Տէր, ի ծառայս քո եւ ի գործս ձեռաց քոց. առաջնորդեա՛ որդւոց նոցա, եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր:

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

*Եւ Դպիրքն երգեսցեն.*

## Ծարական ԱԿ

*Ի վերայ վիմի հաւատոյ առաքելոց եւ մարգարէից*
*շինեցեր զքո սուրբ զԵկեղեցի. եւ ի սմա միաձայնեալ*
*եղեն մարդիկ ընդ հրեշտակս. փառաւորելով սուրբ զԵրրորդութիւնդ:*

*Տեղի ապաւինի և ժողովարան բանաւոր հօտի.*
*բնակարան հրեշտակաց, նաւահանգիստ արդարոց եւ*
*մեղաւորաց քաւարան. զարդարեալ առաքելովք եւ մարգարէիւք:*

*Բանն Աստուած եւ ծածկեալ խորհուրդն յաւիտենից,*
*իջեալ ի յերկնից մարմնացեալ ի կուսէն, խաչեալ յերկրի եւ*
*թաղեալ ի նոր ի գերեզմանի եւ յարուցեալ յերրորդ աւուր. զի*
*զմարգարէից զտառսն կատարեսցէ:*

*Ուրախ լեր Աստուածածին, տաճար անխախտելի.*
*զքեզ մեծացուցանեմք:*

*Յղացար անարատաբար և զԱստուած վայելչապէս*
*ծնար. ուրախ լեր Աստուածածին, տաճար անխախտելի.*
*զքեզ մեծացուցանեմք:*

*Երգէ մարգարէն, սուրբ է տաճար սքանչելի*
*արդարութեամբ եւ դուռն երկնային. ուրախ լեր*
*Աստուածածին, տաճար անխախտելի. զքեզ մեծացուցանեմք:*

*Խաչ քո եղիցի մեզ ապաւէն բոցանիշ փայլմամբ*
*հրով. խորտակեաց զթշնամին եւ ելոյծ զդատակնիք*
*անուանեալ փայտն կենաց ի փրկութիւն տիեզերաց:*

*Վերառեալ ցնծան երկինք եւ երկիրս ուրախանայ ընդ*
*յայտնիլ սրբոյ խաչին սեռակնաձեւ քառաթեւին, որ զաշխարհս*
*լուսաւորեաց արեգակնակերպ ճառագայթիւք:*

*Ցնծացաւ Երուսաղէմ, բերկրեցան հաւատացեալք*
*նորահրաշ զարդարեցան. քանզի տեսին զյաղթող նշան,*
*արարածք ամենայն ի լոյսն պայծառացան:*

*Եւ Դպիրքն ասասցեն.*
Ալէլուիա, ալէլուիա:
Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո. եւ զտեղի յարկի փառաց քոց:

*Սարկաւագն.*
Ալէլուիա: Օրթի

*Քահանայն.*
Խաղաղութիւն ամենեցուն:

*Դպիրքն.*
Եւ ընդ հոգւոյդ քում:

*Սարկաւագն.*
Երկիւղածութեամբ լուարուք:

*Քահանայն.*
Սրբոյ աւետարանէս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու:
*(Գլ. Ժ. 22-30)*

*Դպիրքն.*
Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

*Սարկաւագն.*
Պռոսխումէ.

*Դպիրքն.*
Ասէ Աստուած:

*Քահանայն.*
Ի ժամանակի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրուսաղէմ եւ ձմեռն էր: Եւ շրջէր Յիսուս ի տաճարին ի սրահին Սողոմոնի: Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն եւ ասեն. մինչեւ յե՞րբ թափես զոգիս մեր. եթէ դու ես Քրիստոսն, ասա՛ մեզ համարձակ: Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. ասացի ձեզ եւ ոչ հաւատայք ինձ. զգործսն զորս ես գործեմ յանուն Հօր իմոյ, նոքին իսկ վկայեն վասն իմ: Այլ դուք ոչ հաւատայք, զի չէք յոչխարաց անտի իմոց:

Ոչխարք իմ ձայնի իմում լսեն. եւ ես ճանաչեմ զնոսա, եւ զկնի իմ գան: Եւ ես տամ նոցա զկեանս յաւիտենականս. եւ մի կորիցեն ի յաւիտեան. եւ մի ոք յափշտակեսցէ զնոսա ի ձեռաց իմոց: Հայր իմ որ ետ ինձ զնոսա՝ մեծ է քան զամենայն. եւ ոչ ոք կարէ յափշտակել ի ձեռաց Հօր իմոյ:

Ես եւ Հայր իմ մի եմք:

*Եւ Սարկաւագն քարոզեսցէ.*

Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ի Տեառնէ, Զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր:

Տէրն ամենակալ կեցուսցէ եւ ողորմեսցի:

*Եւ Եպիսկոպոսն ասասցէ զաղօթս.*

Տէր Յիսուս Քրիստոս Աստուած մեր, որ տիրես երկնաւորաց եւ երկրաւորաց եւ ոչ երբեք թողուս ի ձեռանէ քումմէ զայնոսիկ որ կարդան զանուն քո սուրբ, աղաչեմք զքեզ, տո՛ւր մեզ զիմաստութիւն քո եւ լցո՛ ի սիրտս մեր զսէր քո, զի զօրացեալք նովիմբք մարթասցուք հանել ի գլուխ զձեռնարկութիւնս եւ կառուցանել քեզ տեղի պաշտաման եւ տուն աղօթից ի փառս մեծի տէրութեան քո. զի եթէ ոչ դու շինեսցես զտուն՝ ընդունայն վաստակին շինողքն նորա:

Ցանուն քո, Տէր, զսկիզբն առնեմք շինուածոյս. շնորհեա՛ մեզ տեսանել եւ զկատարումն նորա զի զանուն քո հանապազ կարասցուք պաշտել ի նմա: Տո՛ւր ամենեցուն որք նուիրաբերք լինին վասն շինութեան տանս, պարգեւս բարիս եւ վարձս բազումս յարքայութեան երկնից: Եւ զսիրելիս անուան քո լցո՛ երկնային շնորհօք, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին եւ ամենայն սրբոց քոց:

Եւ մեք գոհանալով փառաւորեսցուք զքեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

*Եւ Սարկաւագն ասասցէ.*

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Ընկալ, կեցո եւ ողորմեա:

*Եւ Եպիսկոպոսն առեալ բրիչն հարցէ եւ բրեսցէ զտեղին յորում զսեղանն կանգնելոց են, ասելով.*

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

*Եւ ապա այլք ի ժողովրդենէն, ըստ պատւոյ պատշաճի, հարցեն զտեղին եւ բրեսցեն:*

*Եւ Դպիրքն երգեսցեն.*

## Շարական ԱՁ

*Որ ի քրովբէական կառս հանգչիս, այսօր իջեր յերկնից ի դաս առաքելոցն սուրբ Հոգի. Օրհնեալ ես թագաւոր անմահ:*

*Որ գնաս ի վերայ թեւոց հողմոց, այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսն սուրբ Հոգի. Օրհնեալ ես թագաւոր անմահ:*

*Որ խնամես տեսչութեամբ զքո զարարածս, այսօր եկիր ի հաստատել զԵկեղեցի քո սուրբ Հոգի. Օրհնեալ ես թագաւոր անմահ:*

*Եւ Սարկաւագն քարոզեսցէ.*

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ:

Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ եւ ողորմեա՛:

*Եւ Եպիսկոպոսն ասասցէ զաղօթս.*

**Պահպանեա՛ զմեզ Քրիստոս Աստուած մեր ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւդ քով ի խաղաղութեան. փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն. արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:**

**Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:**

*Եւ երգեսցեն ամենեքեան.*
***Հայր մեր որ յերկինս. . .***

*Եւ Եպիսկոպոսն ասասցէ.*
**Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

**Օրհնեալ եղերուք ի շնորհաց սուրբ Հոգւոյն:**
**Երթայք խաղաղութեամբ եւ Տէր Յիսուս եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան:**

*Եւ ասասցեն ամենեքեան.*
**Ամէն:**

*Եւ արձակին ի խաղախտութիւն:*

# TRANSACTION REPORT

FEB- 6-96 TUE 2:27 PM

FOR: DIOCESE ARMENIAN CHURCH 212 447 6674

| DATE | START | SENDER | RX TIME | PAGES | TYPE | NOTE |
|---|---|---|---|---|---|---|
| FEB- 6 | 2:23 PM | 1 305 871 7714 | 3'49" | 6 | RECEIVE | OK |